

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՍԵՐԳԵՅ ԱՐԹՈՒՐԻ ԶԱԼԻՆՅԱՆ

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՅՈՒՑՈՒԹՅՈՒՆԸ ՓԱՄԲԱԿ ԳԵՏԻ ԵՎ ՆՐԱ
ՎՏԱԿՆԵՐԻ ԶՐԵՐԻ ՈՐԱԿԻ ՎՐԱ**

**գ.00.11 - «Եկոլոգիա» մասնագիտությամբ կենսաբանական
գիտությունների թեկնածովի գիտական աստիճանի
հայցման առենախոսության**

ՍԵՊԱԿԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2013

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА

СЕРГЕЙ АРТУРОВИЧ ЗАЛИНЯН

**ВЛИЯНИЕ ХОЗЯЙСТВЕННОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ НА КАЧЕСТВО ВОД
РЕКИ ПАМБАК И ЕЕ ПРИТОКОВ**

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени
кандидата биологических наук по специальности
03.00.11 – “Экология”

ԵՐԵՎԱՆ - 2013

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնում

Գիտական դեկավար՝
գյուղատնտեսական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ո. Յ. Եղոյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝
կենսաբանական գիտությունների դոկտոր գ. Մ. Ֆայվուշ
կենսաբանական գիտությունների թեկնածու գ. Ա. Գևորգյան
Արագատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կյանալու է 2013թ. հոկտեմբերի 11-ին ժամը 15.00-ին
ՀՀ ԲՈՆ-ի Կենսաբազմազանության և էկոլոգիայի 035 մասնագիտական
խորհրդում:

Հասցե՝ 0014, Երևան, Պ. Ալեքսի 7, ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն, E-mail: zoohec@sci.am
Աստեղախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի գրադարանում և www.schzhe.sci.am
կայքում:

Սեղմագիրն առաքված է 2013թ. սեպտեմբերի 11-ին:

Тема диссертации утверждена в Научном центре зоологии и гидроэкологии НАН РА

Научный руководитель:

доктор сельскохозяйственных наук, профессор,

Р. А. Едоян

Меню корреспондентов Официальные оппоненты:

ДОКТОР БИОЛОГИЧЕСКИХ НАУК

Г. М. Файвши

кандидат биологических наук

Г. А. Геворгян

Ведущая организация: Ереванский государственный университет

Защита диссертации состоится 11 октября 2013 г. в 15.00 часов на заседании специализированного совета 035 по биоразнообразию и экологии ВАК РА

Адресс: 0014, Ереван, ул. П. Севака 7, Научный центр зоологии и гидроэкологии
НАН РА. E-mail: zoohec@sci.am

С диссертацией можно ознакомиться в библиотеке Научного центра зоологии и гидроэкологии НАН РА и на сайте www.sczhe.sci.am.

Гидроэкология НХГТА и на сайте www.schne.sci.am
Автореферат диссертации разослан 11 сентября 2013 г.

Автореферат диссертации разослан 11 сентября 2015 г.

Ученый секретарь специализированного совета 035.

Геннадий Соколович — кандидат биологических наук

WILHELM BÖTTCHER

А. Г. Хачатрян

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի արդիականությունը: 21-րդ դարում մարդկության գերինդի-րը բնության և հասարակության խելացի ու ներդաշնակ հարաբերությունների ստեղծումն է: Պարտադիր է դարձնում տնտեսական զարգացման համադրումը տարեր էկոհամակարգերի անվնաս պահպանմանը և կատարելագործմանը:

ՀՀ Լոռու մարզում նակերեսային և գրունտային ջրերը խիստ անհավասարաչափ են բաշխված, որը որոշակիորեն բարդացնում է ջրի էկոլոգիական խնդիրների լուծման, ռազինավ և ճիշտ օգտագործման հարցերը՝ կապված մարդի տնտեսական գործունեության հետ:

Առանձին խնդիր է դարձել ջրի էկոլոգիական որակի գնահատումը, պահպանումն ու վերահսկումը, ջրային ռեսուրսների ճիշտ կառավարումը: Մաքուր ջրի պահանջը ինչպես այսօրվա, այնպես էլ ապագայի համար միշտ ամենաարդիականն է: Զրի աղտոտումն անընդհատ ուղղեկցում է մեզ, իսկ աղտոտման աղբյուրները բազմաբնույթ են:

Զրակենամակարգերի արդյունավետ կառավարման և ջրային պաշարների ճիշտ գնահատման համար անհրաժեշտ է ՀՀ մազգերում իրականացնել գետերի ջրային էկոհամակարգերի նոր հատվածային (վտակների) ուսումնասիրություններ, նպատակ ունենալով դրանով կանխել ջրաէկոհամակարգերով պայմանավորված դեգրադացիոն գործընթացները:

Փամբակ գետի և նրա վտակների ջրաէկոհամակարգերը մարդի և հարևան պետությունների համար ունեն ջրաէներգետիկ, ռողոման, ռեկրեացիոն, տուրիստական և արդյունաբերական նշանակություն:

Մեր ուսումնասիրած գետերի էկոհամակարգերի կենսացենողի և ջրի քիմիական բաղադրիչների աղտոտվածության աստիճանի ցուցանիշների բացահայտումը, ջրերի ջրակենսաբանական որակի գնահատումը կատարվում է առաջին անգամ:

Նպատակը և խնդիրները: Ենթագործության նպատակն է պարզել վանաձոր քաղաքի նակերևությային ջրերի և քաղաքով հոսող գետերի ջրերի որակը, պարզել հողային էրոզիոն գործընթացը, հողային էրոզիայի ազդեցությունը ջրերի որակի վրա՝ առաջնորդվելով գետերի ջրահավաք ավագանների տնտեսական գործունեությամբ:

Նշված նպատակին հասնելու համար մեր կողմից առաջ են քաշվել հետևյալ խնդիրները.

1. Ուսումնասիրել Փամբակ գետի և նրա վտակների ջրային ռեսուրսների ներկա վիճակը, կատարել Վանաձորի հատվածում նշված գետերի աղտոտման աղբյուրների ցուցակագրում:

2. Ուսումնասիրել գետերի ջրաֆիզիկական հատկությունները՝ ջրածախսը, ջրերի ջերմաստիճանի դիմամիկան, գետերի հողային էրոզիոն գործունեությունը:

3. Ուսումնասիրել Փամբակ գետի և նրա վտակների ջրաքիմիական աղտոտվածությունը: Որոշել գետերի ջրաքիմիական բաղադրիչները՝ ρH , Eh , ազոտի հանքային ծևերի՝ NO_2^- , NO_3^- , NH_4^+ , հանքային ֆոսֆորը, Mg^{2+} :

4. Ուսումնասիրել գետերի աղցցենողի կազմը, սեղնային փոփոխությունները և կապը ջրաֆիզիկական և ջրաքիմիական ցուցանիշների հետ:

5. Պարզել Փամբակ, Տանձուտ, Լեռնապատ ու Վանաձոր գետերի անքորդեն և այլ բնույթի էկոլոգիական աղտոտվածության տարեկան և սեզոնային փոփոխությունները:

6. Որոշել Վանաձոր քաղաքի տարածքում գետերի որակի վրա աղտոտման ազդեցությունը:

7. Մշակել համալիր գործողությունների ծրագիր՝ ուղղված Փամբակ գետի և նրա վտակների ջրի որակի բարելավմանը, կենսացենողի և հողային էրոզիայի նվազեցմանը:

Աշխախոսությամբ զիտական նորույթը: Աշխատանքում առաջին անգամ ուսումնասիրում են նարգի տարածքով հոսող գետերի հիդրոէկոլոգիական որոշ խնդիրներ՝ ջրաֆիզիկական և ջրաքիմիական հատկությունները, աղտոտվածությունը, ջրահավաք ավազանի բնութագիրը և առանձնահատկությունները, իոնի ջրային էրոզիայի առանձնահատկությունները, նրա ազդեցությունը կենսացենողի բնական լանդշաֆտների և ազդոցենողի, քաղաքի սանհիտարակիցների պայմանների ու հողատարման վրա՝ կապված մարզի տնտեսական գործունեությունից:

Ուսումնասիրություններից ստացված արդյունքները կնպաստեն ոչ միայն Փամբակ գետի և նրա վտակների, այլև Դեբեր և Կուր գետերի ջրերով պայմանավորված տնտեսական գործունեության կարգավորման և դրանց էկոհամակարգերի բարելավման միջոցառումներին, ջրի որակի լավացմանը և էլուզիական որոշ խնդիրների ճշշտ լուծմանը: Ստացված արդյունքների կիրառումը խթան կանոնիսանա Դեբեր գետի և նրա շարունակությունը կազմող գետերի որակը խմելու ջրի ցուցանիշներին հասցնելուն, ինչը անհրաժեշտ է ինչպես Շայաստանի (Լոռու և Տավուշի մարզերի), այնպես էլ հարևան պետությունների համար:

Տեսական և գործնական մշամակությունը: Վանաձորով հոսող գետերի ջրահավաք ավազանների համալիր ուսումնասիրության արդյունքները.

- Պայմաններ կստեղծեն գյուղատնտեսության բնագավառում ոռոգման և այլ նպատակներով օգտագործվող ջրերի հավաքման և ռացիոնալ օգտագործման համար:
- Կնպաստեն արդյունաբերության, ձկնաբուծության և ռեկրեացիոն հնարավորությունների ընդլայնմանն ու զարգացմանը, կրաքրացնեն հետաքրքրությունը տուրիզմի լուրտի նկատմամբ:
- Հողի էրոզիայի հետևանքով քաղաք Քափանցած տիղմի, իոնի տարրեր տրամաչափի մեխանիկական բաղադրիչների պակասելը հնարավորություն կտա վերահսկելի դարձնել սանհիտարակիթենիկ պայմանները, կապահովի այդ նպատակով հատկացնող ծախսերի կրծատում, ազգաբնակչության առողջական վիճակի բարելավում:
- Ուսումնասիրությունների արդյունքները կարեն նշանակություն կունենան ջրաէկոլոգիայի բնագավառում բարձրադիր լուսիկական համակարգերի անթրոպոգեն էվլուսիվացման և աղտոտման պրոցեսների բացահայտման, ինչպես նաև համրապետության ջրաէկոհամակարգերի և նրանց ջրահավաք ավազանների բնական ռեսուրսների քանակական և որակական պաշարների քարտեզագրման, վերականգնման, պահպանման և ռացիոնալ օգտա-

գործման ժամանակակից և հեռանկարային ռազմավարական ծրագրերի մշակման գործնթացներում:

- Ստացված արդյունքները կարող են օգտակար լինել հանրապետության և հարևան պետությունների ջրային ռեսուրսների ու ջրային համակարգերի կառավարման ոլորտների զարգացման, ինչպես նաև այդ ոլորտների օրենսդրա-իրավական դաշտի ստեղծման ու կատարելագործման համար:
- Տեսական և գործնական արդյունքները կարող են հետաքրքրություն ներկայացնել ջրային ոլորտի մասնագետների, ճարտարագետների, տնտեսագետների, տնտեսվարող սուբյեկտների, գիտության և կրթության բնագավառի աշխատողների, ինչպես նաև հանրակրթական, միջին մասնագիտական և բարձրագույն կրթության բնագավառում սովորողների համար:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ հիմնադրույթները.

- Փամբակ գետի և նրա վտակների ջրագրական, ջրաֆիզիկական և ջրաքիմիական ցուցանիշները
- Տնտեսական գործունեության ազդեցությունը Վանաձորով հոսող գետերի ջրերի որակական ցուցանիշների վրա, առերապոգեն գործուների ազդեցության էկոլոգիական առանձնահատկությունները
- ալգոցենոզի ուսումնասիրության արդյունքները՝ կապված դրանց ջրահավաք ավազանի տնտեսական գործունեության հետ
- Գետերի ջրաէկոլոգիական առանձնահատկություններից ելնելով, հողային էրոզիայի էկոլոգիական բնութագիրը՝ կապված բնակավայրերի դիրքադրման հետ:
- Առաջարկություններ՝ ուղղված Փամբակ գետի և նրա վտակների ջրի որակի բարելավմանը, կենսացենոզի և հողային էրոզիայի նվազեցմանը:

Աշխատանքի փորձահավաստիությունը: Հետազոտությունների արդյունքները քննարկվել են Վանաձորի Յովիաննես Թունանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի կենսաբանաբիոմիական ֆակուլտետի բուսաբանության և աշխարհագրության ամբիոնի հիմնարում (2009-2012թ.), ՇՀ ԳԱԱ Յիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի և Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի գիտխորհուրդների հիմնարում (2008-2013թ.): Ձեկուցվել է ՎՊՄԻ-ի երիտասարդ գիտաշխատողների հանրապետական կոնֆերանսում (Վանաձոր, ՎՊՄԻ, 2013թ.), ներկայացվել է ԵՊՀ-ում կազմակերպված երիտասարդ էկոլոգոների գիտական կոնֆերանսին (Երևան, ԵՊՀ, 2011թ.):

Ցրապարակումները: Աստենախոսության թեմայով հրատարակվել է 7 գիտական աշխատություն:

Աստենախոսության ծավալը և կառուցվածքը: Աստենախոսությունը կազմված է ներածությունից, 6 գլուխներից, եղրակացությունից, գործնական առաջարկություններից, 232 անվանումով գրականության ցանկից: Աստենախոսությունը շարադրված է 140 համակարգչային էջում, պարունակում է 16 այլուսակ, 36 գծապատկեր, 14 նկար:

ԳԼՈՒԽ 1. ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Այս գլխում նկարագրվում են հոսքաջրերի, գետերի ջրագրական, ջրաֆիզիկական և ջրաքիմիական խնդիրների, էկոհամակարգերի, կենսացենոզի, հո-

դային էրոզիայի վերաբերյալ հայրենական և արտասահմանյան գիտական գրականության վերլուծությունները:

ԳԼՈՒԽ 2. ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴԻԿԱՆ

Զրաքիմիական ուսումնասիրությունները կատարել ենք ՀՀ Բնապահպանության նախարարության շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի կենտրոնում: Աշխատանքի ընթացքում օգտագործվել են սպեկտրոֆոտոմետրիկ, իոնոմետրիկ, ծավալային և այլ մեթոդներ (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Զրում քիմիական ցուցանիշների որոշման մեթոդները, գգայնությունը և
միջազգային ստանդարտները

N	Հետազոտ-վող ցուցանիշ	Վերլուծության մեթոդիկա	Մեթոդի գգայնությունը գ/մ ³	Միջազգային ստանդարտները
1	NH_4^+	Ֆոտոկոռումետրիկ, նեսլերի ռեակտիվ	0,05	5664 5778
2	NO_2^-	Ֆոտոկոռումետրիկ, գրիսի ռեակտիվ	0,01	6777
3	NO_3^-	Ֆոտոկոռումետրիկ, կապիլյար անագոն	0,1-0,5	7890-3
4	PO_4^{3-}	Ֆոտոկոռումետրիկ, ամոնիումի մոլիբենաբթու	0,01	3878
6	ԹԿՊ_5	Ծավալային		5815
8	pH	Էլեկտրոաքիմիական		10523
9	Eh	Էլեկտրոաքիմիական		11271

Զրերի որակի դասակարգումը կատարվել է ըստ հետևյալ ջրաքիմիական ցուցանիշների՝ pH, NH_4^+ , NO_2^- , NO_3^- , PO_4^{3-} , ԹԿՊ₅:

Զրի որակի գնահատումը տրվում է էվրոպական միության (ԵՄ) երկրներում ջրային ընդհանուր չափամիջներով, որն իրականացվում է էվրոպական միության մշակված ջրային շրջանակային դիրեկտիվներով (ՁԵԴ), որոնցից ամենակարևորներն են խնելու ջրի (75/440/EEC), գիտրատների (91/676/EEC), քաղցրահամ ջրերի ձկների (78/659/EEC), լողավազանների ջրերի (76/160/EEC), վտանգավոր նյութերի (76/464/EEC) և այլն: Նշված դիրեկտիվների ցուցանիշների դասակարգային արժեքները սահմանվում են միայն խնելու ջրի դիրեկտիվի դեպքում, իսկ սահմանային բույլատրելի արժեքները՝ քաղցրահամ ջրերի ձկների տասնչորս ցուցանիշների համար:

Փամբակ, Տանձուտ, Վաճածոր և Լեռնապատ գետերի ջրերի քիմիական որակի դիմամիկան ուսումնասիրելու համար նմուշները վերցվել են.

Փամբակ և Տանձուտ գետերի հետևյալ հինգ դիտակետերից:

Դիտակետ 1 - Վաճածորի հարավ-արևմտյան հատված (ասֆալտի արտադրանաս),

Դիտակետ 2 - Փամբակ գետ՝ կամրջի մոտ (Ալավերդու ճանապարհի կամուրջ),

Դիտակետ 3 - Փամբակ գետ՝ մինչև Տանձուտ գետին միախառնվելը,

Դիտակետ 4 - Տանձուտ գետի գետաբերան Վաճածորի կամրջից ներքև,

Դիտակետ 5 - Վաճածորի հարավ-արևելյան հատված (Փամբակ-Տանձուտ գետերի միախառնումից հետո, Վաճածորի ԳԱՅ-ի տարածքից մոտ 1,5 կմ հոսանքով ներքև):

Իսկ Վանաձոր և Լեռնապատ գետերից վերցրել ենք յուրաքանչյուրից երեք դիտավետ.

Դիտավետ 1 - գետի ակունք,

Դիտավետ 2 - գետի միջին հոսանք,

Դիտավետ 3 - գետի գետաբերան:

Նմուշները վերցվել են 2009 - 2012 թթ.-ին: Նմուշները պահածոյացվել են: Որոշվել է 9 ջրաբխմական ցուցանիշ՝ ըստ միջազգային ISO և EPA ստանդարտների (աղյուսակ1):

Զրի ջերմաստիճանը և թՀ-ը բոլոր դիտակետերում որոշվել է տեղում՝ նմուշառնա ժամանակ, դաշտային բազմապարամետր YSJ անալիզատորով:

Մնացած ջրաբխմական անալիզների համար նմուշները վերցվել, պահածոյացվել և տեղափոխվել են ՀՀ Բնապահպանության նախարարության ջրջական միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի կենտրոնի լաբորատորիա: NO_3^- -ը որոշվել է ինն-քրոնատողորդաքիկական մեթոդով DYONEX-1000 ինն-քրոնատողագործությունով: NO_2^- -ը որոշվել է սպեկտրալուսաչափական մեթոդով Գրիսի ռեակտիվի միջոցով, իսկ PO_4^{3-} -ը՝ ամնմիումի մոլիբդատի հետ փոխազդեցությամբ՝ գունաշափական մեթոդով UV-1650c SHIMADZU սպեկտրալուսաչափով: Թե՛Կ-ն որոշվել է ջրում լուծված թթվածին պարունակության տարրերությամբ՝ նմուշը 5 օր մթության մեջ 20°C -ում առանց օդի մուտքի պահպանելուց հետո:

Մակերևության ջրերի էրոզիոն առանձնահատկությունները ուսումնասիրելու համար որոշել ենք գետի ջրի ծախսը և լուծված նյութերի քանակը:

Գետի ծախսը հաշվարկելու համար օգտվել ենք $Q=\omega \cdot v \frac{m^3}{\text{վրկ}} \text{ քանաձևից},$ որտեղ Q -ն գետի ծախսն է, ω -ն՝ գետի կենտրանի կտրվածքի մակերեսը, v -ն՝ ջրի միջին արագությունը:

Կենդանի կտրվածքի մակերեսը հաշվելու համար չափել ենք նրա միջին խորությունը՝ հ-ը, բազմապատկել հունի միջին լայնությամբ՝ f -ով և ստացել կենդանի կտրվածքի մակերեսը՝ $\omega = f \cdot h \frac{m^2}{s}:$

Գետի արագությունը հաշվել ենք լողանի օգնությամբ՝ նշելով որևէ կետ, բաց թղթելով լողանը գետի մակերեսով, 1 րոպեի ընթացքում չափել նրա անցած ճանապարհը, տեղադրել $Q=\omega \cdot v$ քանաձևի մեջ, որը ցույց է տալիս գետի ծախսը տվյալ պահին:

Տարեկան հոսքի ծավալը որոշվել է $W = Q \cdot T \frac{m^3}{\text{ժամաձևով}},$ որտեղ Q -ն գետի միջին ծախսն է, իսկ T -ն՝ տարվա վայրկյանների թիվը, որը հավասար է $31,6 \cdot 10^6:$

Ուսումնասիրել ենք քաղաքի ջրակայի հոսքաջրերով և քաղաքով հոսող գետերով պայմանավորված հողային էրոզիան:

Ըստ քաղաքապետարանի տվյալների, Վանաձոր քաղաքում կա շուրջ 300 նրբանցք, փակուլի, փողոց: Զրի կոշտ և նուրբ բերվածքի քանակը որոշել ենք քաղաքի վեց գլխավոր փողոցներում՝ Արովյան, Զաքարյան, Չուխաջյան, Սայաթ-Նովա, Կամո, Զեյրուն, որոնք գտնվում են քաղաքի տարբեր քաղանասերում և այս կամ այն չափով հարում են լանջերին: Փողոցներն ունեն որոշակի թեքություններ: Ուսումնասիրությունները կատարել ենք ապրիլ-օգոստոս ամիսներին՝ 2009-2011թք.:

Մթնոլորտում փոշու քանակությունը որոշել ենք ֆիլտրերի միջոցով: Այն հնարավորություն է տալիս որոշել մթնոլորտում փոշու ընդհանուր քանակու-

թյունը: Ֆիլտրերը տեղադրել ենք մեր կողմից ուսումնասիրված 6 փողոցներում՝ անձրևներից հետո երկրորդ օրվանից սկսած: Նմուշառումը կատարել ենք, երբ մթնոլորտում փոշու քանակությունը կայունացել է: Ուսումնասիրությունները կատարել ենք չորս տարվա ընթացքում (2009-2012թթ.): Այդ ընթացքում ունեցել ենք շուրջ 1900 նմուշ: Ֆիլտրերը յուրաքանչյուր օրվա վերջում տեղադրել ենք պոլիէթիլենային թաղանթներում, տեղակիսել լաբորատորիա և կշռել՝ գրանցելով ստացված տվյալները: Պահպանել ենք ննուշառման կարգը և կշռման ճշտությունը:

ԳԼՈՒԽ 3. ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԸՆԴՐԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԲՆԱԿԱՆԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Այս գլխի առանձին ենթագլուխներում տրվում է Լոռու մարզի ընդիանուր բնութագիրը, նկարագրվում են բնակլիմայական պայմանները, բուսական և կենդանական աշխարհը, հողային ծածկությը:

ԳԼՈՒԽ 4. ՎԱԼԱՋՈՒ ՔԱՂԱՔՈՎ ԴԱՍՈՒ ԳԵՏԵՐԻ ՁՐԱԳՐԱԿԱՆ ՈՒԽՈՒՍԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այս գլխում նկարագրվում են Վանաձոր քաղաքով հոսող գետերի ջրագրական տվյալները, Փամբակ գետի և նրա վտակների հոսքն ու տարածական բաշխումը, գետերի ջրային ռեժիմը, սննդան աղբյուրները, գարնանային վարարումները և առավելագույն ելքը, սակավաջուր փուլը ու նվազագույն հոսքը, սառցային ռեժիմը, ջրի պղտորությունը (աղ. 2, 3), որոնք ուղղակիորեն ազդում են գետերի կենսագանգվածի վրա:

Աղյուսակ 2

Գետերի ջրագրական տվյալները (ըստ Մնացականյան, Թադևոսյան, 2007)

N	Գետի անվանումը	Երկա- րությու- նը (կմ)	Ջրահավաք ավագանի		Հեռավորու- թյունը գետա- բերանից (կմ)	Գետի հոսքը (մ ³ /վ)	
			Միջին քաղ- ձողությունը (մ)	Մակերե- սը (կմ ²)		Նվազա- գույնը	Մուգա- ցույնը
1	Փամբակ	84	2100	1370	136	2.45	10.62
2	Տաճուտ	23	2066	141	100	0.34	2.24
3	Լեռնապատ	18	2154	126	117	0.60	2.01
4	Վանաձոր	14	2050	40	1.7	0.20	1.60

Աղյուսակ 3

Վանաձոր քաղաքով հոսող գետերի ամսական և սեզոնային պղտորությունը (գ/մ³)

Գետ-դիտավետ	Ամիսներ												Տարի					
	Մայոս				Հունիս				Հուլիս									
	-	=	≡	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI							
Փամբակ-ք. Վանաձոր	123	135	574	1368	810	1889	v						XII-III	IV-VI	VII-XI			
	364	34	1321	1368	671	716	450	766	471	372	211	218	217	77.1	976 (15%)	3972 (62%)	1461 (23%)	6410
Փամբակ-գ. Մեղրուտ	935	127	34	810	810	288	211	218	471	210	144	96.6	700.1 (13%)	2802 (53%)	1819.1 (34%)	5321.2		

Փամբակ-կ. Թթւնամյան	31.0	48.5	135	235	346	271	254	197	194	201	206	155	177	-	-	31.3	245.8 (15%)	794 (49%)	574.8 (36%)	1614.6
Լեռնապատ- գ.Լեռնապատ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	703	-	-	-


Նշված գետերում մեղմ կլիմայական պայմանների հետևանքով արտահայտված սառցային ռեժիմ չի նկատվում: Սակայն Վանաձոր գետի մակերևության հատվածը որոշ չափով սառցակալում է: Վանաձորով հոսող գետերի ավագաններում սառցածածկույթի տևողությունը տատանվում է 14-60 օրվա սահմաններում:

Փամբակ գետի Մեղրուտ ջրաչափական դիտակետում գարուն - ամառային ժամանակաշրջանի պղտորությունը գերազանցում է ծմեռային (դեկտեմբեր-մարտ) ամիսների պղտորությանը 4.1, իսկ տարվա ամիսների տարբերությունը՝ 14.3 անգամ:

Վանաձոր քաղաքի տարածքի ֆիզիկաշխարհագրական պայմանների յուրահատկությունների հետևանքով առկա գետաբերուկային հոսքի տատանումները կազմում են 0.43-11.57 տ/տարի:


ԳԼՈՒԽ 5. ԳԵՏԵՐԻ ԶՐԵՐԻ ՋՐԱՖԻԶԻԿԱԿԱՎԱԾ, ՋՐԱՔԻՄԻԱԿԱՎԱԾ ԵՎ ՋՐԱԿԵԼՍԱՐԱՆԱԿԱՎԱԾ ՀԵՏԱԶՈՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

5.1. Զրի ջերմաստիճանը: Փամբակ գետի և նրա վլտակների ջրի ջերմաստիճանի տարեկան տատանումները եղել են 6-ից 20°C , իսկ միջին ջերմաստիճանը տատանվել է 7-20 $^{\circ}\text{C}$: Տարբեր է նաև ջերմաստիճանի ամսականը. Վանաձորինը՝ 6-18, Տանձուտինը՝ 6-18, իսկ Լեռնապատինը՝ 7-18 $^{\circ}\text{C}$ (գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Փամբակ, Լեռնապատ, Վանաձոր և Տանձուտ գետերի ջերմաստիճանային միջին տարեկան ցուցանիշները (2009-2011թթ.)


5.2. Զրի ջրածնային ցուցիչը (ρH): ρH -ը համդիսանում է ջրում պարունակվող մի շարք հանքային և օրգանական թթվահիմնային փոխազդեցության մեջություն և ցույց է տալիս մակերևութային ջրերի թթվահիմնային աստիճանը: Մակերևութային ջրերում ջրածնային իոնների խտությունը փոխվում է ըստ ամիսների և տարիների, ինչը պայմանավորված է ապարների, գետերի ջրահավաք ավագանի հողի քիմիական բաղադրությամբ, ինչպես նաև բուսական և կենդանական մնացորդներով (գծապատկեր 2):



Գծապատկեր 2. Գետերի ջրերում թՀ-ի միջին տարեկան դինամիկան (2009-2011թթ.)

Բնական ջրերում ջրածնային հոմների սահմանային թույլատրելի կոնցենտրացիան (ՍթԿ, 73 առողջապահության նախարարության 25.12.2002 թ. N 876 որոշում) տատանվում է 6-9-ի սահմաններում: Ջրածնային հոմի կոնցենտրացիայի անսական տատանումը կազմում է 6.7-7.8, իսկ տարեկան միջինը՝ 7.0-7.3: թՀ-ի ցուցանիշի վրա ազդում են տարվա եղանակը, տեղումների քանակը, հողի քիմիական բաղադրությունը, գյուղատնտեսական գործունեությունը և այլն:

5.3. Զրի օքսիդավերականգնման գործակիցը (Eh): Օքսիդավերականգնման գործակիցը (Eh): Օքսիդավերականգնման գործակիցը ապահովագրության մեջ տառում թթվածի և որոշ մետաղների առկայությամբ: Բնական ջրերում այս ցուցանիշը տատանվում է 400-700 մՎ սահմաններում: Փամբակ գետում 2009թ. տատանվել է 280-350, 2010թ.՝ 280-360, 2011թ.՝ 280-360 մՎ սահմաններում: Վանաձոր գետում Eh-ի ցուցանիշը տատանվել է 290-380 մՎ սահմաններում: Eh-ի ցուցանիշը Վանաձոր գետում բարձր է (380 մՎ՝ մայիս), քան Փամբակ գետում (360 մՎ՝ հունիս), ինչը բացատրվում է այդ գետում օրգանական նյութերի մեծ քանակով՝ պայմանավորված բնակավայրերի տնտեսական գործունեությամբ: Տանձուտ և Լեռնապատ գետերում Eh ցուցանիշները մոտ են նշված գետերի ցուցանիշներին (գծապատկեր 3):





Գծապատկեր 3. Կանաձորով հոսող գետերի ջրերում Eh-ի միջին տարեկան դինամիկան (2009-2011թթ.)

5.4. Ամոնիումային ազոտ [NH₄⁺]: Գետերի քիմիական աղտոտվածությունը բնութագրվում է նաև ազոտի պարունակությամբ, որը որոշվում է իոնների ձևով, այն է՝ ամոնիումային [NH₄⁺], նիտրատային [NO₃⁻] և նիտրիտային [NO₂⁻]:

Մակերևության ջրերում ամոնիում իոնի սահմանային թույլատրելի կոնցենտրացիան կազմում է 0,39 մգՆ/լ:

Մեր ուսումասիրությունները ցույց են տալիս, որ Փամբակ, Տանձուտ, Վանաձոր և Լեռնապատ գետերում NH_4^+ իոնի ցուցանիշները տարբեր են: Փամբակ գետում ամոնիում իոնի պարունակությունը քաղաքի տարածքում գետի հոսանքով դեպքի ներքև տատանվում է 0,30 մգ/լ-ից 2,34 մգ/լ-ի սահմաններում, իսկ Վանաձոր քաղաքի հյուսիս-արևելքը, երբ գետ են թափվում կունեսորի միջոցով հավաքված կոյուղաջրերը, կտրուկ աճում է, հասնելով 2,40 մգ/լ-ի, որը նույնական գերազանցում է սահմանային թույլատրելի կոնցենտրացիան (գծապատկեր 4):

Տանձուտ գետի գետաբերանի ջրում NH_4^+ իոնի ցուցանիշը մոտ 2 անգամ գերազանցում է ինչպես Փամբակ գետի ջրերին՝ մինչև Տանձուտի հետ միախառնան կետը, այնպես էլ Փամբակ գետի՝ Վանաձոր քաղաքի հարավարևմտուր ընկած հատվածի ջրերում դիտվող կոնցենտրացիաները: Ստացված տվյալներն ապացուցում են, որ Վանաձոր քաղաքի տարածքում տեղի է ունենում կոնունալ-կենցաղային բնույթի կեղտաջրերի անմիջական ներսոր Փամբակ և Տանձուտ գետերի ջրեր: Քաղաքի տարածքում կոնունալ-կենցաղային ջրերը չեն կոյուղացվում, և քաղաքի տարածքում առկա են չկազմակերպված արտանետումներ ու բազմաթիվ կտրային աղտոտման աղբյուրներ:



Գծապատկեր 4. Ամոնիում իոնի պարունակությունը Փամբակ և Տանձուտ գետերում


Գծապատկեր 5. Ամոնիում իոնի պարունակությունը Կամանդղ և Լեռնապատ գետերում

Վանաձոր և Լեռնապատ գետերում (գծապատկեր 5) գրանցված NH_4^+ իոնի ցուցանիշները մոտ 3-4 անգամ գերազանցում է սահմանային թույլատրելի կոնցենտրացիան: Վերը նշված բոլոր գործոններն առկա են այս գետերում ևս, սակայն նշված իոնի քարձոր քանակությունն այստեղ հավանաբար պայմանավորված է գյուղատնտեսական գործունեությամբ:


Լեռնապատ գետում թափվում են համայնքի կենցաղային աղբը, գոմաղբի որոշ մասը, բույսերի փտուած մնացողորդները, կենացանիների որակները (շուն, կատու և այլն), իսկ Վանաձոր գետի վերին հովտում (Վանաձոր քաղաքի հյուսիս-արևելքը) գտնվում է հանգստի գոտի և անասնապահական ֆերմա, որոնք աղտոտում են ջուրը: Քաղաքի Վանաձոր թաղամասում՝ «Արմենիա» հանգստյան տան տարածքում, նկատելի է նույնիսկ բնակիչների կոյուղու առանձին հոսքը Վանաձոր գետ:

5.5. Նիտրոտային $[\text{NO}_2^-]$ և նիտրատային ազոտ $[\text{NO}_3^-]$: NO_2^- -ը և NO_3^- -ը նիտրատների վերականգնման կամ ամոնիակի կենսաքիմիական օքսիդացման արդյունք են:

Մակերևությաին ջրերում NO_2^- -ի սահմանային թույլատրելի կոնցենտրացիան կազմում է 0,02 մգ/լ:



Գծապատկեր 6. Նիտրիտ իոնի տարեկան միջին պարունակությունը Փամբակ և Տանձուտ գետերում ըստ դիտակետերի (2009-2010թթ.)



Գծապատկեր 7. Նիտրատ իոնի տարեկան միջին պարունակությունը Փամբակ, Տանձուտ, Վանաձոր և Լեռնապատ գետերում (2009-2011թթ.)


NO_2^- -ի կոնցենտրացիան համահումը է ամոնիում իոնի կոնցենտրացիոն դինամիկային և հաստատում է այն փաստը, որ Վանաձորի տարածքում Փամբակ և Տանձուտ գետերի ջրերի որակի վրա կոնունալ-կենցաղային կեղտաջրերի ազդեցությունը նույնպես մեծ է: Այն հիմնավորվում է նրանով, որ Փամբակ գետի և նրա Վտակների աղոտուումը տեղի է ունենում ամբողջ քաղաքի տարածքում և անընդհատ, որի պատճառով Փամբակ գետի ջրերը, չնայած ինքնամաքրման մեջ պոտենցիալի և թթվածնային ռեժիմի բավարարվածության, չեն հասցնում մաքրվել (գծապատկեր 6):

Փամբակ գետի NO_3^- -ի բանակության վրա կրկին դիտվում է Վանաձոր և Լեռնապատ գետերի ազդեցությունը (գծապատկեր 7):


Փամբակ գետում NO_3^- բարձր է Վանաձոր և Լեռնապատ գետերի համեմատությամբ, որտեղ առավելագույն կոնցենտրացիան կազմում է 5,9 մգ/լ (դեկտեմբեր), իսկ նվազագույնը՝ 1,2 մգ/լ (մայիս): Փամբակ և Տանձուտ գետերի միախառնումից հետո այդ ցուցանիշը հասնում է 6,0 մգ/լ (հունվար), որը հավանաբար պայմանավորված է կյուղագրերով: Լեռնապատ գետում NO_3^- -ի առավելագույն ցուցանիշը եղել է 5,5 մգ/լ (օգոստոս), նվազագույնը՝ 1,2 մգ/լ (մարտ), իսկ Վանաձոր գետում՝ 5,4 (օգոստոս) և 1,1 գ/մ³ (նարտ): Նկատվում են նաև սեզոնային և տարեկան տատանումներ, որոնք օրինաչափորեն առկա են ինչպես Փամբակ, այնպես էլ Տանձուտ գետերում: Այստեղ ևս առկա է գյուղատնտեսական գործունեության բացասական ազդեցությունը:

5.6. Գետերի ջրերում ֆուֆասմերի (PO_4^{3-}) դիմամիկա: Ֆուֆորի միացությունները, որոնք հանդիպում են լուծված, կոլորիդային և կախույթային վիճակներում, առաջանում են ջրային կենսացենոզի կենսագործունեության և քայլայնան, օրթոֆուֆատ պարունակող ապարների հողմնահարսնան, քայլայնան և ջրում լուծման, հատակային նստվածքների հետ փոխանակման ու ջրային ավազանից բափանցման արդյունքում:

PO_4^{3-} -ի պարունակությունը բարձր է Փամբակ գետի Վանաձորի հարավարևմտյան և Փամբակ-Տանձուտ գետերի միախառնումից հետո հատվածներում (գծապատկեր 8, 9):



ԳԺԱՊԱՅԱՏԿԵՐ 8. Փամբակ և Տանձուտ գետերի ջրերում ֆոսֆատ իոնի (PO_4^{3-}) մոցին աճական և 2009-2010թթ. միջին տարեկան տվյալները (մգ/լ)



ԳԺԱՊԱՅԱՏԿԵՐ 9. Կամանքոր և Լեռնապատ գետերի ջրերում ֆոսֆատ իոնների (PO_4^{3-}) մոցին տարեկան տվյալները (մգ/լ) (2009 – 2011թթ.)

Փամբակ գետում և նրա վտակներում PO_4^{3-} -ի կոնցենտրացիաները չեն գերազանցում սահմանային բույլատրելի կոնցենտրացիան, որը կազմում է 3,5 մգ/լ: Լեռնապատ գետում PO_4^{3-} -ի կոնցենտրացիան տատանվում է 0,15-ից 1,1 մգ/լ-ի սահմաններում: Նույն հարաբերությունը դիտվում է նաև Կամանքոր գետում՝ 0,15 և 1,2 մգ/լ:


Այսիսկով՝ PO_4^{3-} -ի կոնցենտրացիան ամենից բարձր է Կամանքոր, ապա՝ Լեռնապատ գետերում, որը հավանաբար պայմանավորված է այդ գետերում թափվող կոյուղացրերով և գյուղական գործունեությամբ: Գետերի հոսանքի ուղղությամբ PO_4^{3-} -ի քանակությունն ավելանում է: Նկատվում է PO_4^{3-} -ի կոնցենտրացիաների սեղոնային փոփոխություն. նվազագույն քանակությունը դիտվում է ձմռամբ և աշնանը, իսկ առավելագույնը՝ գարնանը և ամռանը:

5.7. Թթվածին կենսաքիմիական պահանջը (ԹԿՊ5): ԹԿՊ5-ը պայմանավորված է գետերի թեքությամբ, ֆլորայով և ֆաունայով: ԹԿՊ5-ի մեծությունը Փամբակ գետում հոսանքով դեպի ներքև աճում է՝ աղտոտման աստիճանին համահում:


ԹԿՊ5-ի ցուցանիշը Փամբակ գետում հոսանքով դեպի ներքև տատանվում է 1,3 - 3,8 մգ O_2 /լ-ի սահմաններում: ԹԿՊ5-ի արժեքների դինամիկան ցույց է տալիս, որ հատկապես Վանաձոր քաղաքի տարածքում է տեղի ունենում կենսածին և օրգանական նյութերով անընդհատ և գետի հոսանքով դեպի ներքև աճող աղտոտում: Փամբակ գետում այդ ցուցանիշը թիւ տարբերությամբ, իսկ Տանձուտ գետում մոտ 2 անգամ, գերազանցում են սահմանային բույլատրելի կոնցենտրացիան, չնայած նրանք մինչ այդ ևս աղտոտված են: Բարձր աղտոտման ցուցանիշ դիտվում է Փամբակ գետի 3-րդ դիտակետում՝ 3,8 մգ O_2 /լ և Տանձուտ գետի գետաբերանում՝ 4,6 մգ O_2 /լ, երբ երկու գետերի ջրերն էլ անցնում են ամբողջ քաղաքի տարածքով և կրում են քաղաքի երկարությամբ անընդհատ աճող աղբեցությունը ջրերի որակի վրա: ԹԿՊ5-ի պարունակության մեծացումը քաղաքի ներսում հաստատում է անոնիում, նիտրիտ և ֆոսֆատ իոնների համար ստացված այն եզրակացությունները, որ քաղաքի տարածքում առկա է կոյուղացրելի չկարգավորված հոսք:

Կամանքոր քաղաքի հարավ-արևելյան դիտակետում՝ Կամանքորի կուլեկտոր-ներից ներքև, ԹԿՊ5-ի միջին ցուցանիշը տատանվում է 2,6 - 3,6 մգ O_2 /լ-ի սահ-

մաններում. Տանձուտ գետի գետաբերանում՝ 4,6 մգՕ₂/լ, իսկ Փամբակ գետի 3-րդ դիտակետում՝ 3,8 մգՕ₂/լ (գծապատկեր 10, 11):



Գծապատկեր 10. ԹԿՊ₅-ի տարեկան միջին պարունակությունը Փամբակ և Տանձուտ գետերում (մգՕ₂/լ)



Գծապատկեր 11. ԹԿՊ₅-ի տարեկան միջին պարունակությունը Վանահան և Լեռնապատ գետերում (մգՕ₂/լ)

Այսպիսով՝ Փամբակ գետի և նրա վտակների ջրերում՝ որպես լեռնային արագահոս գետեր, ԹԿՊ₅-ի ցուցանիշը՝ տատանվում է հետևյալ հաջորդականությամբ. Փամբակ գետում՝ 1,6-3,8 մգՕ₂/լ, Տանձուտում՝ 3,6-4,6 մգՕ₂/լ, Լեռնապատում՝ 1,3-2,1 մգՕ₂/լ, Վանահանում՝ 1,0-1,6 մգՕ₂/լ-ի սահմաններում:

5.8. Փամբակ և Տանձուտ գետերի ֆիտոպանկուոնում ալգոցենոզի ուսումնասիրությունը: Զրային էկոհամակարգերում յուրահատուկ տեղ են զբաղեցնում ջրային բույսերը, նրանցում՝ ֆիտոպանկուոնը, հատկապես ալվանկունային ջրիմուռները: Պանկունային ջրիմուռների կազմի մեջ մտնող բազմաթիվ խմբեր հանդիսանում են օրգանական աղտոտվածության ստույգ ցուցիչներ, դրանք բնորոշում են ջրի սապրոբայնության աստիճանը: Դա վկայում է այն մասին, որ այդ ջրիմուռները կարող են հանդիսանալ ջրերի էկոլոգա-սանիտարական որակի կենսաբանական ինդիկատորներ և կոնկրետ բնութագրել տվյալ ջրային էկոհամակարգի որակը:


Գետերի ֆիտոպանկուոնի քանակական և որակական զարգացման վրա ազդում են վերը նշված բոլոր գործուները:

Որոշվել է ջրիմուռների կազմը, նրանց քանակական ցուցանիշների ինչպես տարեկան, այնպես էլ սեզոնային և ամսական դինամիկան ըստ թվաքանակի և կենսազանգվածի, որը պայմանավորված է գետերի և մակերևության ջրերի ֆիզիկաքիմիական տարրեր բաղադրիչներով:

Ուսումնասիրությունների արդյունքներից պարզվել է, որ ալգոցենոզում գերազանցող մասն են կազմում ջրիմուռների երեք խմբեր՝ դիատոմային (Bacillariophyta), կանաչ (Chlorophyta), կապտականաչ (Cyanophyta), հազվագյուտ հանդիպում են դեղնականաչ (Xanthophyta) ջրիմուռները, որոնք մեծ դեր չունեն քանակական ցուցանիշներում, սակայն ավելացնում են ֆիտոպանկուոնի կենսաբազմազանության ցուցանիշները:

Փամբակ և Տանձուտ գետերի ալգոցենոզում ըստ թվաքանակի գերազանցող մաս են կազմում դիատոմային ջրիմուռները, որոնց գերակայումը բնորոշ է գետերի ֆիտոպանկուոնին: Կանաչ և կապտականաչ ջրիմուռների թվաքանակը՝ համեմատած դիատոմայինների հետ, կազմում են ավանդունում փոքր քանակություն: Այսպես, Փամբակ գետում դիատոմային ջրիմուռների տարեկան մի-

Չին թվաքանակը 2009թ. կազմել է 561.799 բջ./լ, իսկ Տանձուտ գետում՝ 649.814 բջ./լ: Կանաչ և կապտականաչ ջրիմուռների թվաքանակը Փամբակ գետում համապատասխանաբար՝ 22.870 և 143.370 բջ./լ է, Տանձուտ գետում՝ 12.814 և 63.737 բջ./լ (գծապատկեր 12):



Գծապատկեր 12. Փամբակ և Տանձուտ գետերում պլանկտոնային ջրիմուռների առանձին խմբերի թվաքանակի միջին տարեկան դիմացիկան


Փամբակ և Տանձուտ գետերի ալգոցենոզում կրկին գերակայում են դիատոմային ջրիմուռները, որոնց տարեկան միջին կենսազանգվածը Փամբակ գետում կազմում է 4,01 գ/մ³, իսկ Տանձուտում՝ 2,72 գ/մ³: Կանաչ և կապտականաչ ջրիմուռների կենսազանգվածը նոտ 2-4 անգամ պակաս է դիատոմային ջրիմուռների դիսազանգվածից: Ալգոցենոզում դիատոմային, կանաչ և կապտականաչ ջրիմուռների ընդամուր տարեկան միջին կենսազանգվածը Փամբակ գետում՝ 4,93 գ/մ³ է, Տանձուտում՝ 3,08 գ/մ³ (գծապատկեր 13):

Ինչպես նշեցինք, Վանաձոր քաղաքով հոսող Փամբակ և Տանձուտ գետերում պլանկտոնային ջրիմուռներից ըստ կենսազանգվածի և թվաքանակի գերակայում են դիատոմայինները, իսկ կանաչ և կապտականաչ ջրիմուռներից առավել գերակայող են կապտականաչները, ինչը համուսանում է աղտոտվածության ցուցանիշ: Փամբակ և Տանձուտ գետերում կապտականաչ ջրիմուռներն ըստ կենսազանգվածի նոտ 6 և ըստ թվաքանակի նոտ 2 անգամ գերազանցում են կանաչ ջրիմուռներին:

Նոյնատիպ փոփոխություններ են նկատվում նաև Փամբակ և Տանձուտ գետերի ալգոցենոզում ջրիմուռների կենսազանգվածի ցուցանիշներով:


Փամբակ և Տանձուտ գետերի ալգոցենոզում նոյնպես գերակայում են դիատոմային ջրիմուռները: Տարեկան միջին ցուցանիշներով դիատոմային ջրիմուռների միջին կենսազանգվածը Փամբակ գետում կազմում է 4,01 գ/մ³, իսկ Տանձուտում՝ 2,72 գ/մ³: Կանաչ և կապտականաչ ջրիմուռների կենսազանգվածը նոտ 2-4 անգամ քիչ է դիատոմային ջրիմուռների կենսազանգվածից: Ալգոցենոզում դիատոմային, կանաչ և կապտականաչ ջրիմուռների ընդամուր տարեկան միջին կենսազանգվածը Փամբակ գետում կազմում է 4,93, իսկ Տանձուտ գետում՝ 3,08 գ/մ³:

Կանաչ ջրիմուռների միջին սեզոնային առավելագույն թվաքանակը դիտվել է դիտակետ 5-ում ձմռանը՝ 90000 բջ./լ, իսկ նվազագույնը՝ դիտակետ 1-ում աշնանը՝ 2600 բջ./լ: Կապտականաչ ջրիմուռների առավելագույնը՝ ինչպես նշեցինք, անռան ամիսներին է, իսկ նվազագույնը՝ դիտակետ 5-ում գարնանը՝ 7000 բջ./լ: Դեղնականաչ ջրիմուռները իիմնականում գրանցվել են դիտակետ 3-ում աշնանը՝ 22000 բջ./լ, նոյն դիտակետում ամռանը՝ 30000 բջ./լ և



Գծապատկեր 13. Փամբակ և Տանձուտ գետերում պլանկտոնային ջրիմուռների առանձին խմբերի կենսազանգվածի միջին տարեկան դիմացիկան


ηիտակետ 4-ում միայն աշնանը՝ 48000 բջ./լ: Մյուս դիտակետերում դեղնականաց ջրիմուռներ չեն հայտնաբերվել (գծապատկեր 14):



Գծապատկեր 14. Փամբակ և Տաճանձու գետերում պահնկուռային ջրիմուռների թվաքանակի փոփոխությունների միջին սեզոնային դինամիկան ըստ դիտակետերի

Նույնատիպ դինամիկա է նկատվում նաև ըստ դիտակետերի պլանկոտնային ջրիմուռների կենսազանգվածի համար (գծապատկեր 15):

Դիտառմային ջրիմուռների կենսազանգվածի միջին սեզոնային ցուցանիշներն ըստ դիտակետերի հետևյալն են՝ դիտակետ 1-ում առավելագույնը եղել է ձմռանը՝ 5,4 գ/մ³, նվազագույնը ամռանը՝ 1,4 գ/մ³, դիտակետ 2-ում՝ առավելագույնը՝ աշնանը՝ 6,10 գ/մ³, նվազագույնը՝ ամռանը՝ 2,35 գ/մ³, դիտակետ 3-ում համապատասխանաբար, 4,00 գ/մ³, ձմռանը և 3,35 գ/մ³՝ ամռանը, դիտակետ 4-ում՝ 6,65 գ/մ³ ձմռանը և 1,87 գ/մ³՝ աշնանը, իսկ դիտակետ 5-ում՝ 4,33 գ/մ³, գարնանը և 3,12 գ/մ³՝ աշնանը:



Գծապատկեր 15. Փամբակ և Տաճանձու գետերում պահնկուռային ջրիմուռների կենսազանգվածի փոփոխությունների միջին սեզոնային դինամիկան ըստ դիտակետերի

Կանաչ ջրիմուռների առավելագույն կենսազանգվածը դիտվել է դիտակետ 5-ում՝ 2,14 գ/մ³, իսկ մյուս դիտակետերում այդ ցուցանիշները տատանվում են 0,01-0,86 գ/մ³-ի սահմաններում: Նույն պատկերն է նաև կապտականաչ ջրիմուռների մոտ: Կապտականաչ ջրիմուռների առավելագույն կենսազանգվածը

Եղել է դիտակետ 5-ում ամռանը՝ $3,65 \text{ q/m}^3$, դիտակետ 3-ում առավելագույնը ամռանը՝ $0,65 \text{ q/m}^3$, նվազագույնը՝ դիտակետ 4-ում և 5-ում գարնանը՝ $0,02 \text{ q/m}^3$:

